

89199

17-35

309

9/21/38

~~891.542-1~~
~~734~~

ԿԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃԵԼՆ



15-9

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

— 33 —

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԵՐԱՆՈՒՀԻ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Տ. Մ. Ռոտինյանցի
Типогр. Т. М. Ротинянца, Гол. пр. д. № 41.
1899

375101

02 MAR 2013

27880

891.99. *պ*
7-35

10 NOV 2011


Договорено Цензурою. Тифлисъ, 16 Марта 1899 г.

† ՄԱՆԿԱՆ

Ահա սիրուս. ցաւ ու հոգսեր, մութը ինչպէս
գերեզման՝
Սիրուն մանկիկ, քնքոյզ մանկիկ, քեզ եմ բերում
այս անգամ.
Շանդ կնորեցի՝ բաց չգրաց սրտիս համար շեղ ու
ճար, —
Դարդս շնոր է, անուեղ մանկիկ, շու աղօթիւր ինձ
համար...

Ես դեմում եմ իմ եղբորը մի՛շտ հալածւած
ու անուէր,
նա դանձում է, նա թափում է աղի-լեղի արցունք-
ներ. —
Կեանքս նրան նւիրեցի ու ես եղայ ուժասպան,
ես յոգնած եմ, քնքոյզ մանկիկ, — շու աղօթիւր ինձ
համար...

Ես ուզում եմ արցունք թափել, արցունք չու-
նիմ թափելու,
ես ուզում եմ կորչել, թուշել շէպի հետու ու հեռու,
բաց իմ հոգին շղթայում եմ այս դարդերը ան-
համար,



Յուսահար եմ, անուշ մանկիկ, — Դու աղօթիր ինձ
համար...

Ես էլ անմեղ մանուկ էի՝ ինչպէս Դու ես, իմ
մանկիկ,

Գիշերները ես շնոր էի աղօթում զո՛ւր ու լռիկ.

Իմ աղօթքը շնոր էր մաքուր, մանկական ու յու-
սավան,

Բայց ես հիմայ չեմ աղօթում, — Դու աղօթիր ինձ
համար...

✓ Ասորդի նման վայելցին ու հանգան իմ վառ օրերը,
եւ իմ Դէմքին էլ չեն ժպտում ոսկեշողուն ասորդերը,
Գիշերները այնպէս սիրուն էլ չեն բազմում Դաշու
ու սար.

Ա՛խ, իմ հոգին մանկական չէ, — Դու աղօթիր ինձ
համար...

✓ Գուցէ շուր Գայ վերջին օրս, այն վե՛հ, ահեղ
Դարասարան.

Երբ ամենքը աղօթք անեն, երգեն սխուր շարական,
Ա՛խ այն ժամին, երբ ես անխօս, հանդարտ թող-
նեմ այս աշխարհ, —

Վերջին անգամ, սիրուն մանկիկ, Դու աղօթիր ինձ
համար...

Վ Ե Ր Գ

Այն հովրի մէջ կախարդական՝
Ուռենին էր սօսափում,
Եւ նրա րակ ալէծածան
Առուն անուշ խոխոջում,
Երբ լուսինը իր շողերը
Երկնքումն էր վառվառում,
Եւ իր նսեմ, խօլ սպերը
Առի ծոցում ԴողԴողում, —
Մենք կնքեցինք այն վառ գիշեր
Մեր սուրբ ուխտը յաւիտեան,
Ուռենին էլ սօսափում էր
Մի մեղեդի քաղցրաձայն...

Այն հովիտը հիմայ մթին՝
Հառաչում է ու սխրում...
Օ՛ր Կեանում եմ իմ ուռենին
Այն յուսահար վայրերում:
Փայլուն գիշեր, փայլուն գիշեր,
Ո՛ւր հեռացար այս հովտից.
Սիրուն աչեր, սիրուն աչեր,
Ո՛ւր չքացաք իմ սրտից...
Տերևներին՝ Դեզնած, խղճով
Հալածում է ցուրտ քամին, —
Յիշարակներ, զնո՞ւմ էք Դուք, —
Տարէք ձեզ հեւ այս հոգին...



ԹՈՂ ՅԱՄԱՌ ՎԻՅՏԸ...

Թող չամառ վիշաբը դարձնելով նորից
 Վրդովէ հողուս հանգստութիւնը.
 Մօս մի՛ գար, երբէք մի՛ խղճաց շու ինձ,
 Ի՞նչ անեմ, ո՞ւր է կարեկցութիւնը:
 Մենութեան մէջն եմ վերքերս բուժում,
 Նրանց ձեռ դալու շու չմօտենանս.
 Կարող եմ թէ՛ չէ, — ես չեմ ախտուում.
 Բայց այն բուժելու շու չմօտենանս...
 Ես չեմ հաւատում կեանքի խնդութեան,
 Ես չեմ հաւատում սիրոյ պատկին.
 Եթէ կայ կեանքումս սիրելու մի բան,
 Այդ իմ սանձանքն է, թախի՛ծը խորին...



ԱՂԱ ԿԱԹԻԼԸ...

Ահա կաթիլը ցուրդ արցունքներես...
 Օ՛ր կեանքի մուսկ, գիտեմ չես հեռու,
 Բայց մինչ հասնելդ... աւանդ այս սրտիս, —
 Դեռ շնոր արցունք կայ ՚ի զուր թափելու...
 Այս մառախլապատ ու փշոյ ուղին՝
 Գիտեմ, շիրիմն է ինձ հասցնելու,
 Բայց մինչ կ'հնչէ կոչնակը վերջին, —
 Դեռ շնոր սանձանք կայ ՚ի զուր սանելու...



Մ. Ա.-ին

Աստղերը որպէս մահւան կերոններ՝
Լուռ շողշողում են շառնաշունչ քամուց...
Յուրա է իմ սիրտը, ցուրտ որպէս ձմեռ,
Օ՛ նա յոգնած է վշտով զարկելուց...

Ո՞ւր ես, ախ ո՞ւր ես, իմ մահւան հրեշտակ,
Դու որ երկինքս շարձրիր գերեզմանն,
Դու որ խեղճ սրտիս տալով լոկ փանջանք՝
Իմ վառ սիրոյ հետ խաղ արիր միայն...

Ախ ո՞ւր ես, արի, թող քո հայեացքը
Զտայ ինձ ո՛չ սէր, ո՛չ մտերմութիւն...
Գոնէ կը լսես իմ հառաչանքը,
Որպէս մի օտար աղօթքի հնչիւն...



Ս Ո Ն Է Տ

(Մ. Ա.-ին)

Ախ, մի՛ հրամայիր ծանր լուսթեամբ,
Որ ես քեզ երբէք, երբէք չսիրեմ...
Հոգիս ապրում է սրտիդ ջերմութեամբ,
Եւ շուրջն չես տեսնում որքան փանջում եմ...

Ես կ'ցանկացի զգացմունք լինել,
Փոթորկիլ, յուզել սրտիդ խորքերում...
Ես կ'ցանկացի արցունքի փոխել,
Որ թառամէի քո վառ աչերում...

Ես կ'ցանկացի մի երազ լինել,
Երանք մանկական, անշրջախարհային,
Վառելով սրտումդ ահեղ ցնորքներ...

Ես կ'ցանկացի քո սէրը երգել,
Որպէս ովկիանը արև-արբային,
Խռովելով կրծքիս ահեղ ալիքներ...



✂ **ԲԱՐԻ ԳԻՇԵՐ...**

Լ՛ու գիշեր է. որպէս նսեմ ուրւական՝
Թափառում եմ ես նրա գոտն առաջին,
Շուրջով պէպք է քայլամուտի հեռանամ,
Նոր ոչժ գալով իմ այս սիրոյ գոտնջանքին...

Բարի գիշեր... Անա հանգաւ ճրագը,
Պարունհանը մթութեան մէջ թաղելով.
Խորհրդաւոր, լուռ է նրա սենեակը,
Որպէս գաճար, նւիրական, անվրդով...

Բարի գիշեր... Տես լուսինը շալկացած՝
Քուն է մընում այն ձիւն ու ծով ամպերում
Եւ թախծալի սուերներով փաթաթւած՝
Բարդիները լուռ ննջում են պարտիզում...

Բարի գիշեր... Անա լռեց ամե՛ն ինչ...
Ս՛ ամենքին բարի գիշեր պիպի գայ,—
Միայն սիրոս է, որ քուն չունի վշտերից,
Միայն սիրուս բարի գիշեր էլ չկայ...

✓ **ԱՆ, ԵԹԷ ԱՅՆՏԵՂ...**

Ա՛խ, եթէ այնպէղ գերեզմանից յեպ,
Դեռ կնչ մի այլ կեանք անյայտ ու անհուն,
Եւ եթէ մահը շէպ՝ երանաւէպ
Այն կեանքի գիրկն է մեր հոգին գոտնուս,—
Ս՛, ինչպէս կեանքը ես կ'ըողնէի,
Ուր ջինջ մաքրութեան չկայ սո բբ գաճար,
Ես շէպի այնպէղ, այնպէղ կ'երթայի,
Դէպ՝ այն կեանքն անհուն, հեռու, փրկարար...
Եւ կամ գուցէ նա մի խորհրդաւոր,
Մի անվերջ կեանք է իր սարսափներով.
Ի՛նչ փոյթ, կ'երթայի շուրջով, քանի որ
Այս կեանքն աւերեց հոգիս իր թոյնով.
Ես կ'ըողնէի շղթայ ու գոտնջանք,
Արժէր վշտանալ այս կեանքի համար.
Ես կ'ըուէի մտքից էլ արագ
Դէպ՝ հեռու, հեռու անձանօթ աշխարհ...
Ս՛, եթէ այնպէղ, գերեզմանից յեպ,
Անչ շարձեալ աշխարհ մի երանաւէպ...

ԴՈՒ ԳԻՏԵՍ ՄԱՆՈՒԿ...

Դու գիտես, մանուկ, ինչքան եմ փանջուում
 Երբ ամեն անգամ կորցնում եմ սէրը...
 Մանուկ, այդ միայն ես ինքս եմ զգում,
 Ե՛ս գիտեմ միայն սրտիս Դարձերը...

Ա՛խ, գիտես որքան խուլ գիշերներին՝
 ես անիծել եմ, փանջուել, բայց լուել...
 Ի՞նչ արած, մանուկ, բախտի հաճույքին
 Զոհուում են սիրտն էլ. հոգին էլ, սէրն էլ...

Ուզեցի սիրել հեռու թոյներից,
 Հեռու Դաւերից, ազատ, անկապանք,—
 Հէնց Դրան համար զրկեցի սէրից,
 Հէնց Դրան համար մնացի մենակ...

Ո՛վ որ ցաւ ունի, Դարման էլ ունի.—
 Պանդուխտն հայրենիք, որքն ապաստարան,
 Միայն իմ սիրտն է, որ ոչինչ չունի,
 Յիշատակներն էլ ճնշում են նրան...




Վ ԱՅՐԻ ՍԷՐ

Արի մօտս, սիրուն աղջիկ,
 Առանձնանալը հեռու մի փեղ.
 Մեր վերելք՝—աստղատ երկինք,
 Լուսինն էլ մեզմ լողաց այնտեղ:

Եւ մենք նստած երկնքի փակ՝
 Երգենք վայրի, օտար մի երգ.
 Ո՛չ մի խոսքում իրար չփանք,
 Դաւի մասին էլ չխորհենք:

Ո՛չ աստղերին բռնենք վկայ
 Մեր յարապետ սիրոյ համար,
 Ոչ էլ մեր այս երկրի վրայ
 Երգենք՝ չաւէտ սիրել իրար:

Բաժանումը մեզնից հեռի՝
 Սիրենք իրար,—անհոգ սիրենք.
 Փող մեր սէրը լինի վայրի,
 Սկիզբ ու վերջ էլ չլինենք...



✕ **ՔԵՂ ԻՆՉ ՊԱՍԱՀԵՑ...**

Քեզ ինչ պատահեց, ó ջահէլ հասակ,
Ինչո՞ւ այդպէս շուր թունաւորւեցիր.
Ի՞նչն է քեզ մաշում, կասկած ու պանջմանք՝
Թէ տեսած կեանքից շար բան սովբեցիր:

Օտար, շրպտոյ ճամբորդի նման՝
Նայիր, անցնում են քո պարիները...
Օրերդ անհետ կորչում են անձայն,—
Ո՞ր են, ի՞նչ եղան քո երազները:

Ինչո՞ւ ես նայում ուրիշի կեանքին,
Կամ անգոր կուլին, փոքրոգի անկման,
Ինչո՞ւ ես պարւում ուրիշի ցնորքին,
Սարկին յայտուկ վհապ հաշտութեան...

Չգնջ կաց, կ'անցնեն այս պարիները,
Սուջ կ'նայես,— ծերութիւն ու մահ.
Ինչ որ կորցնես՝ էլ այն օրերը
Յետ չեն որս, կանչես— էլ չես չի շանաչ:

Սովորականը թօթափիր քեզնից,
Ընարիր քո ուղին և առանջ գնա.
Եւ եթէ շփոթն կ'լինես կեանքից՝
Անողորմ կուր ու մենակ մնա...

✕ **ԹՈՂ ԸՆԿԵՐ, ԹՈՂ...**

Թո՞ղ ընկեր, թո՞ղ մենք միշտ օտար լինինք,
Մարդկանցից հեռու, սարէսար լինինք,
Խուլ շուռ ու խուլ սիրտ մի՛ ծեծիլ. ընկեր,
Թո՞ղ խեղճ ու անքուն, միշտ թափառ լինինք...

Օրէցօր կորան մեր ընկերները,
Մէկ-մէկ հեռացան, մէկ-մէկ մանրացան,
Թող շունն ու մենակ լինին օրերը,
Թո՞ղ ձնչեն սիրտը ժէս քարի նման...

Հեռացիր, պանջւեր,— քեզ կ'մոռանան,
Մեռիր,— արիւնդ ոչ ոք չի տեսնի...
Թո՞ղ մեր արցունքներն չորդ աղբիւր շառնան,
Թո՞ղ, ընկեր, սրտերս հէնց այդպէս մեռնի...

Բողո՞րն հեռացան... Վէ՛հ, ընկեր, մենք էլ
Մնացինք շուրսը. ցուրտ է ու խաւար...
Թո՞ղ, մենք չենք կորչի, կ'երթանք փնորելու
Որբերի նման անկիւն մեզ համար:

Եթէ չենք գումի, թո՞ղ որ չգունենք,
Թող մնանք օտար ու թափառական.
Գոնէ կ'լինի մի քար, ուր և մե՛նք
Յոգնած գլուխներս կ'թեքենք վրան:

Խուլ են շուները, ով որ սուն ունի՝
Ով շուռ բաց կ'անի յոգնած ճամբորդին,—
Ե՛հ, այս գիշերում թող Աստուծո՞ւ պահի
Մտրուն ու անդէր կեանքի որբերին...

ՆԱ, ՈՎ ՏԱՆՁԻՒՆ Է...

Նա, ով փանջւել է անոցս ու գաղտնի
 Վիրաւոր հողին մենութեան յանձնած,
 Միայն այնպիսի սրտին է յայտնի
 Իմ վիշաք, սիրտը թոյներով լցւած:

Ժպտում եմ, երբ որ սիրտս է խոր ձմիւմ,
 Երբ կտոր-կտոր կեանքս է փշրւում:
 Երբ ես լսում եմ,—ինձ չեն մօտենում,
 Երբ վիշտս եմ պատմում,—ինձ չեն հասկանում...

Բայց ամենից շատ ով վիշտս գիտէր,
 Նա, որ իմ սիրտը պէտք է ամօքէր,—
 Հէնց նա իմ վերքին նոր վերքեր բարդեց,
 Հէնց նա իմ սրտի ողջ տեղին շանթեց...

+ ՕՏԱՐ ԳԱՐՈՒՆ

Գարձեալ գարուն... Յուշերս էլի գարթնելով
 Ինձ՝ Դուրս փարան հեռուները շրջելու...
 Ես ձորն իջայ, ուր հովն անուշ մրմունջով
 Գեպի Դալար արին էր իջնում հանգչելու:
 Սիրած վայրեր... մրամուր ու օտար
 Շուրջս եմ նայում՝ նրանք ինձ չեն ճանաչում,
 Նոր գարունը մանուկ շնչով հեշտարար՝
 Անցած սիրուս օրօրանն է զուրգուրում:
 Աշունքին էր, որ քեզ նրան կորցրի,
 Սիրուս հեպն էլ իմ գարունը չբացաւ,
 Այնուհետ ձորն ու պերճիտեքը ծառերի,—
 Ողջ այս վայրը սրտիս նման սևացաւ.—
 Այժմ ինչու է գարունն անհող շնչելով՝
 Սիրուս աշնան մեռած վայրը նորոգում,
 Թող իմ ուռին տերեւագուրկ մնալով
 Տիրի... էլ չի նա իմ սէրը օրօրում...
 Ես չեմ ուզում այս նոր գարունն հեշտարար,
 «Նա» էլ չկայ,—Թող գարունն էլ չլինի...
 Սիրտս սե՛ր է, միտքս կնճուտ ու խաւար,
 Երգս վշտիս, այստեղ նա էլ չի երգւի...
 Թող էլ հովիտն այսուհետ չպաճուճի

3993
 1008
 01578
 37510



Աւտիների այս փոնական զարդերով.
Թող էլ գեղը աշխուժելով չթուչի
Այս նոր-օրար գարնան անհող երգերով...
Բայց զնւր... էլ ինձ լսող չկայ. մանկան պէս՝
Հովիւր ու ծառ զարդարել են կանաչով,
Միայն ժայռը,—հին ծանօթս խորատես՝
Ի՛նձ է նայում խոժոռ ու մե՛րկ հայեացքով...



ԱՍ ԻՆՁ ՄԱՐԴԻԿ...

Ա՛խ ինձ մարդիկ խելառ փեսան,
Վրաս քար շաւր ներեցին.
Քարերն եկան՝ սրբիս շիպան,
Վէրքերն երկար մնացին...

Բայց քո նեպած քանը խոշոր՝
Սիրուս խելառ օրերում,—
Թագցրել եմ շաւր խորն ու խոր
Սրբիս արնոս խորչերում...



ՄԻ ՀԱՒՈՏԱ...

Մի հաւատա դու շատ նրանց,
Մի հաւատա, սիրունս,
Որ իմ սէրը ջերմ ու անանց
Վառ ու խոր չէ սրտումս...

Մարդիկ այնքան սովորել են
Իրար խաբել-դաւելու,
Որ հաւատն էլ կորցրել են
Ձերմ ու անանց սիրելու...

Վ ԱՅԴՊԷՍ ԷԼ ՉԵՍ ՍԻՐՈՒՄ...

Այդպէս, էլ չես սիրում շու ինձ
Եւ արում ես օրէցօր.
Ես էլ հեռու կ'երթամ քեզնից,
Կ'թափառեմ սնր ու ձնր...

Ե՛ս եմ այնպեղ միակ արքան,
Պիտի շրջեմ երգելով.
Ծառ ու ծաղիկ շատ պիտի լան,
Իմ խոր վիշտը փենեկով:

Այնպեղ կ'ասեմ, երբ գարունքին
Դու այցելես ձոր ու սար՝
Ծառ ու ծաղիկ, սղջ քո շէմքին
Նայեն խռով ու օտար...

Կ'ասեմ, որ քեզ շատ չտան,
Ոչ էլ կ'ուրճքդ զարդարեն,
Քանի որ շու չնր ես այդքան,
Չնր ու սիրուն ցարօրէն...

ԹԷ ԹԱՐՄ ԿԱՂՆԻՆ Է...

Թէ թարմ կաղնին է մեղմիկ շշնջում՝
Մանուկ ոստերը գլխիս փարածած,
Թէ մանուկներն են անուշ կարկաչում՝
Դալար խմբերով շուրջս բոլորւած։—

Էրնէի, ասում եմ, շեռ թնրմ կ'մնայ
Ձեր վառ գարունը, սիրունիկներս...
Խաղացէք սիրուս թարմ շիրմի վրայ,—
Վաղն էլ պիտի կոխէք սառ գերեզմանս...

Պսակներ հիւսէք ձեր մարտնչ կեանքին,
Նրանք իմ գլխիս կ'սենան, չորնան.
Պսակներ բերէք լոկ սիրուս շիրմին,
Քանի որ նա էր ձեր դարնան նման...

Ա՛խ, նոր սէր չկայ, որ գայ նորոգի
Թառամանձ կեանքս, իմ անոնշ կեանքս...
Ես էլ մնում եմ, որ մահս փանի
Աղի ու լեղի փառապանքներս...


Գիտեմ, երբ ձեզ հետ ինձ էլ է գրկում
Բնութեան վեհ երգն յաւիտենական,—
Նա ձեր մանկութեան օրօրն է երգում,
Բայց իմ խեղճ կեանքիս վերջին շարական...

Բնութեան անկիւնը թող քամին քշէ
Մէկ մէկ վայր ընկած չոր փերկներս,—
Եւ աւլած հովտում թող ազնոր շնչէ
Ձեր շալար կեանքը, սիրունիկներս...

ՍԷՐՆ ԻՆՁ Է...

Սէրն ինչ է, վայելքն ինչ է,—
Սև ու շաժան ծծ է նա...
Ում սրտում որ բոցնը շնէ՝
Նա պիտի խոցելի, սևանայ...

Սէրը, դարնան զարթնող ծծ է,
Հեռու, շնոր կ'խայթէ քեզ...
Ահա սիրբս սև ու խոց է.—
Ա՛խ, սև շնոր եմ լացել ես...



ԱՒ, ԹԱՌԱՍԵՅԻՆ...

Ա՛խ Թառամեցին, մէկ-մէկ վայր ընկան՝
Դալար Թերթերս,— ջահէլ օրերս...
Բայց այս աշխարհում մարդիկ չիմացան
Իմ կեանքի ցեցը,— փառապանքներս...

Լեռան ծաղկի պէս՝ մնացի մենակ,
Եկաւ Թռչունը, փերե՛ս փարաւ,
Եկաւ պաղ քամին, Թաղեց ձիւնի փակ,
Մի սիրտ կար, այն էլ չար մուկը կերաւ...

Բայց այդ մուկ-Թռչուն-մարդիկ չիմացան ?
Իրանց ձեռքերով բացած վերքերս...
Ա՛խ, Թառամեցին, մէկ-մէկ վայր ընկան
Կեանքիս Թերթերը,— ջահէլ օրերս...

ԽՈԺՈՌ ԴԱՅՈՒՄ Է...

Խոժոռ նայում է աշնան գիշերը...
Քամին Դուռ-երդիք ծեծում է, ծեծկում:
Անձրե՛ն է շաչում, հեպն էլ իմ սիրտը:
Վերաւոր, փսսը բաղխում է, զարկում...

Պնուն էին ծեծում,— այդ ո՞վ է ծեծում,
Կորած Թռչնիկս է, արի, ներս արի...
Քամի՛ն էր ծեծում... ձիւ սիրտս է ծեծում,
Այդ սէրս է, սէրս, նա է, քուն չունի...⁶

ԱՒ ԻՄ ԽԵՂԺ ԿԵԱՆՔՈՒՄ...

Ա՛խ իմ խեղճ կեանքում միանգամ միայն
ժպտացի՛ն այն վառ աչերն ու անցան...
Քուցէ կորել են և այս աշխարհից,
Բայց կարծին է որ չի կորել ինձնից...

Ա՛խ, այն աստղերը գիտեն թէ որքան
Անտուն ու անքուն նրանց եմ փնտրել,
Այն վառ ծաղկունքը գիտեն թէ որքան
Սիրունիկներիս ես սեղն եմ հարցրել...


Ա՛խ գիտեն, թէ ես ինչքան եմ խնդրել,
Որ նրանց սեանեմ, գրկերը ընկած՝
Ա՛խ պատմեմ թէ ես որքան եմ լացել,
Եւ որքան խորը սիրել եմ նրանց...



Ո՛ՒՐ ԵՆ...

Ո՛ւր են, արդէն վաղ են մարել ինձ համար
Սիրոյ աչքերն այնքան անուշ ու թովիչ...
Պղտոր սրտով հիմա՞յ մնոր ու օտար՝
Ես փախում եմ այս պահ, անսէր աշխարհից...

Դապարկ հովտում աշնան հողմն է շառաչում,
Երկրի ծերունկ, մթնած սրտի երգն է այդ,
Իմ սրտումն էլ վայրի երգս է մրմնջում,
Այս հովտի պէս սիրտս էլ չոր է ու գունատ...



ԵՐԲ ՎԱՌ ԳԱՐՈՒՆՆ Է...

Երբ վառ գարունն է պճնում նազելով,
 Եւ ես գնում եմ մենակ շրջելու,
 Երբ կոչս անտառն է զարնան օրօրով
 Իր շալար երգը փարածում հեռու,
 Երբ անտառների արքան է ճոճում
 Գարաւոր կապարն իր զիւ շշուկով,
 Կամ գարուն կեանքի փղան է փոճում
 Իր շալար կեանքը երջանիկ երգով—
 Երանգ է կարծես, երանգ ինձ համար...
 Ես մտամոլոր՝ կեանքի խնջոյքում,
 Ես որպէս մունջ հիւր մենաւոր, օրհնի՛ր
 Լոկ սրտիս զաղտուկ փրփունջն եմ լսում...
 Ես միշտ ասում եմ. այս բոլորն անյնէր,
 Գոնէ շնոր ցնդէր փխուր կեանքիս հետ,
 Կամ զոնէ սրտիցս այս քնորը ընկնէր,
 Որ փառապանքս էլ վերջանար անհետ...
 Ասում եմ, ժամ է, հեռանամ, կորչեմ,
 Տամ փուրքս այս խիստ շարաւոր բնութեան,
 Ա՛խ արդէն ժամ է, որ աւլեմ, ժողեմ
 Ձոր փերեներս, փանեմ գերեզման...
 Թեքում եմ կրծքիս լուռ մտորմունքով՝
 Եւ սկսում եմ վշտանալ, փխրել.
 Ձէ որ լնւ գիտեմ, որ միշտ փրփունջով
 Եւ լոկ վշտով եմ ես կեանքս անցրել...
 Գիտեմ ես, որ միշտ կեանքի հովերգը

Գարունքի նման շուրջս չի խայտայ.
 Հիւանդի նման կ'գայ ողբերգը,
 Անյոցս փնջալով այս օրն էլ կ'երթայ...
 Գիտեմ, որ ես միշտ կեանքի խորթ որդիս՝
 Կեանքս մաշել եմ միշտ խոնկ շունդերում,
 Եւ վերջին շոյն էլ հանգած արևիս՝
 Ես ինքս եմ խեղդել մռայլ ամպերում...
 —

Ա՛խ, շառած անվերջ մի թափառական՝
 Բաղխո՞ւմ եմ ամուր պապահած սիրտը,
 Եւ սէրս հիմայ չնչին է ինչքան,
 Կորաւ նա, ուր է իմ հզօր սէրը...
 Կեռների շնորը, ձորերի ժայռը
 Խոժո՞ռ ու մե՛րկ են նայում ինձ հիմայ.
 Եւ անտառների վիթխարի մայրը
 Էլ ինձ չի կանչում, այլ՝ խորթ ես, գնա...
 Գահավիժեցիկն, ժայռերին շիպան
 Վառ երազներիս ամարաթները,
 Դիցուհիներիս ուրուներն անցան,
 Հանգան վառ կեանքիս արեզակները...
 —


Ա՛խ ջահելութիւն, — անփոյթ ինքնասպան,
 Դու էլ ինչ շտապ անցնում գնում ես...
 Ա՛խ ջահելութիւն, ինչ վաղ եմ ես քեզ
 Անմի՛տ շահի՞ճս՝ փանում գերեզման...
 Տանեմ քեզ, փանեմ, թաղեմ հողի փակ
 Դու չար, քմահաճ, խեղճ ջահելութիւն...
 —

Դու որ վախկուր ես, քաշւած ու մենակ
Ջահէլութիւնն ես,—սին ջահէլութիւն...
Ասան, հւր է քո փայլուն պատկերը,
Քո սուրբ ուժերը, հզօր երգերը...
Ճակտից շիգեցին սև-սև ամպերը.—
Օ՛հ ջահէլութիւն,—օ հպարտութիւն...



Ս Ա Ռ Ն Ա Մ Ա Ն Ի Ք

Սառնոց ու ձմե՛ռ,
Լուռ ու խօր գիշեր...
Ծերուկ, ցօւրի հսկան սառցէ թևերով
Երկիրն է գրկել,
Սառցակոյտ գեպով,—ամուր շղթայով
Ձեռ ու ուր կապել,
Ձիւն ու մէգ շնչով, սառցէ համբոյրով
Կրճքին է սեղմել
Լայն, մե՛ծ երկիրը լուծ ու մեռած...
Մէզի խօր ծովում թալուկ շողալով
Լուսինն է մարում,
Սառած մշուշը նւագ ցոլալով
Եզեամ է շնում.
Ու ամենուրէք մահ ու գերեզման.
Ու սիրտս է միայն,
Երագող սիրտս է արթուն՝ կրճքիս փակ,
Ու ես մենակ եմ, անսահման մենակ:



V

*
* *

Մանկուց անհնշո՞ւ եմ նեղսիրտ ու կոպիտ,
 Ու երբ զայրոյթս հոգիս բռնկէ՝
 Օ՛ձ պիտի շառնամ, ես պիտի խայթեմ.—
 Ու քիչ էլ ճամբաս մոյրո՞ւ է գուցէ...
 Բայց վես ճակարտ գետնին կը շնեմ
 Երբ շէմս ելնես ո՞վ ճշմարտութիւն.
 Ես քո սորուկն եմ, կոպիտ բաներդ եմ,
 Քո խեղճ մարգարէն անտուն ու անքուն:
 Ես քեզ եմ փնտրում, որ կանչես շու ինձ,—
 Հպարտ արծիւդ, սէզ թմբկահարդ,
 Ես քեզ եմ գալիս խաւարի խորքից...
 Կ'ուզէի շառնալ ազազիլ գամբուդ,
 Իբրև վեհ պահնորդ շէմքումդ կանգնած՝
 Հպարտ, անողո՞ք,—գիշափչի առաջ...
 —————

*
* *

Մէջ ու մշուշ, ձիւն ու ձմե՛ռ...
 Մոնջ երկիրը քուն մտաւ,
 Ու ամեն ինչ խորին գիշեր
 Իր սե թեի փակն առաւ:
 Ծառ ու անտառ սառոյց հագած՝
 Քնած են լուս ու շւար,
 Սառ վերմակը գլխին քաշած՝
 Մեռել են շնչո՞ւ, ձոր ու սնր...
 Ո՛չ մի ծպտուն, ո՛չ մի շշուկ.
 Շունչ, հով էլ չի շողշողում—
 Սիրտն է միայն խորն ու ծածուկ
 Թոյլ ու թալուկ բաբախում.
 Բարբախում է նւագ, նւազ.
 Ու լուս նա էլ քուն է մզնում
 Խորին, շքեզ երազում...
 —————

*
* *

Չանձրոյթը օրսիս՝ հեռու եմ փախչում
Այնքան ցուրտ, այնքան սգեղ աշխարհից...
Գիշերաց քողով ճամբան է թաղում,
Անձրե՛ն է մաղում պղտոր երկնքից...

Անտառը ծանր երերցնում է
Իր հազարաւոր վեհ հսկաները,
Ու աշնան հողմը փանում, թաղում է
Վեպնի ցուրտ խորշում չոր տերեւները...

Այ՛դ խորշն ամենից զթառապ գիրին է
Մի արիւնտոււած, խեղճ սրտի համար.
Ե՛րբ պիտի ինձ էլ հողմն այնպեղ փանի...
Արի բնց գիրկէ, 7ու զթոյս խաւար...



ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԵԿ

Վաճառու՞մ է «Մուրճ» ամսագրի խմբագրա-
պանը:

Գիմել՝ Тифлисъ. Редакция „Мурчъ“. արդատանձանից՝
Tiflis Russie Rédaction de la revue Mourch

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431341

27880

